



ՏՆՈՐԻՆ ԻՄՐԱԳԻՐ Վ. ԲԱԲԱԶԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻԻ 12

ՀԱՐԱՐ

17 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԱՊՐԱՆԱՍՐԳ ԺԱՄՈՑՈՅՆԵՐ

ԶԵՆԻԹ

ԱՊՐԱՆԱՍՐԳ ԺԱՄՈՑՈՅՆԵՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՈՒՄ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոնական, Օսմանյան-Պարսկական հաստատությունների համագործակցություն, թիվ 16

(Բ. ԱՎԱԶՈՐԻԱՆ) ՍՈՒՐԵՆԻԱԿԱՆ ՍՈՒՐԵՆԻԱԿԱՆ — ԲԱՐԻ ԵՒ ԿԱԴՐԱՆԻ ՍՈՒՐԵՆԻԱԿԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ե. ՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտոնական-Օսմանյան համագործակցություն, թիվ 52

Հատոր 40 փաթեթ



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
զը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարթ մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և տաղաուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅՈՒՆԻ ՀԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն նշանաւոր լազործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատնաց մէջ:

ՆԱԳՐԱԿԱՆ
ՍԵՐՈՒՄԻՆԵՐ

- | | |
|---------|---|
| ՏԵՐԱՆ | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին. |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՅԼԱԹԱՆ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ. |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13. |
| ՍԿՐԻՏԵՐ | Զարը Պոյու, թիւ 120. |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնահիղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզդուլի տունը:



ԲԵՒԵԼՔ ՕՐԱՆ

ԲԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլ-
սոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գա-
ւառներու համար տարեկան 108 դր. վեց-
ամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեւքէ
վաճառում՝ քաւ փաւա: ԱՐԵՒԵԼՔ
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբ-
բազրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսա-
բաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, անտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բայ ի դրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և
Տնօրէն Դարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խմբ-
բազրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 12

ՇԱՐԱԹ

17 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԱՆԳՈՒԹ ԱՌԵՂԾՈՒԱԾ

Գրեց՝ ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

Երեքն ալ Անասթասիայինն էին և Անասթասիա երեքինն ալ էր։

Երեք հոգի և մէկ անձ. — մէկ անձը՝ Անասթասիան էր, իսկ երեք հոգին՝ Պօղոս, Պետրոս և Յովհաննէս։

Մի՛ հաւատաք, երբ ըսին թէ մարդ միայն մէ՛կ սէր կրնայ ունենալ. — ապացոյց Անասթասիան, որ երեք սէր մէկանց ունէր և կրնար երեք հարիւր սէր ալ ունենալ ի հարկին։

Անդունդ մըն էր անոր սիրտը, խոր-վիրապ մը, ինչ կ'ըսեմ, անկող ուկէան մը, ուր սիրոյ բիւր նաւեր կրնային թիավարել և երբեմն ալ նաւարկել՝ նաւանգիստ հասնելէ առաջ կամ ... վերջը։

Հաւատար սիրով մը կը սիրէր երեքն ալ, թէեւ կը զգուշանար անոնցմէ ոչ մէկուն յայտնել իր սիրտին այս ... կոտորակը։

Պօղոսը կը սիրէր՝ իր հոգին չափ, Պետ-

րոսը՝ կեանքին նման, իսկ Յովհաննէսը՝ աչքերուն պէս. և որովհետեւ ո՛չ հոգիէն կըրնար վազ անցնիլ, ո՛չ կեանքէն, ո՛չ ալ աչքերէն, հետեւաբար Պօղոս, Պետրոս և Յովհաննէս կը կազմէին այն եռոտանին, որուն վրայ կ'եփէր իր սիրտը՝ ո՛չ ա՛յնչափ մաղմաղ կրակով մը։

Երեքն ալ մասնաւոր տեղեր ունէին իր ներսիդին, ինչպէս նաեւ մասնաւոր օրեր՝ չաթթուան մէջ. — երկուշաբթին և ուրբաթը Պօղոսինն էր, երեքշաբթին և հինգշաբթին՝ Պետրոսինը, չորեքշաբթին ու շաբաթն ալ՝ Յովհաննէսին. իսկ կիրակին իրեն ազատ կը մնար, քանի որ Տէրը իսկ վեց օր աշխատութիւն պատուիրած է և մէկ օր հանգիստ, այդ օրը Անասթասիա կը նուիրէր աղօթելու, ժամ երթալու, ընտանիքին անդամները տեսնելու, և իր աղափրիքոսին հետ պտրտելու, որուն հետ պիտի կարգուէր օրին մէկը՝ ըստ աւանդութեան։

Երեքն ալ բարեկամ էին իրարու, բայց չէին կասկածեր որ ազգականն ալ կը համարուէին քիչ մը՝ Անասթասիայի կողմէ։

Իւրաքանչիւրը խորին յաւակնութիւնը ունէր թէ մինակ ինք կը բազմէր անհաւատարիմ հելլենոսէին սիրտին թաւշեայ թիկնաթոռին մէջ, մինչ այդ թիկնաթոռը՝ հասարակաց նստարան մը ըլլալ կը թուէր աւելի։

Վարպե՛տ աղջիկ, որ յաջողած էր գոյացնել սիրտերու երրեակ միութիւն մը, որ ... երեսը վար կ'առնէր անմիջապէս իր հրապոյրներուն մանրամասնութիւններուն առջեւ։

Ու եթէ գիտնայի՛ք որ ինտո՛ր կլլեցուցած էր այս երեքին, իր սիրոյն անկեղծութիւնը, խաչո՛ր բարենիշ մը կուտայի՛ք անոր։

Պօղոսին քովը՝ Պօղոսին համար կը մարէր։

Պետրոսին քովը՝ Պետրոսին համար կը խնդենար։

Յովհաննէսին քովը՝ Յովհաննէսին համար կը մեռնէր։

Մարի՛, խնդենա՛լ, մեռնի՛ր ... այս չէ՛ արդէն կիներու գործը։

Մինչդեռ, իրականութեան մէջ, ոչ մէկուն համար ո՛չ կը մարէր, ո՛չ կը խնդենար, ո՛չ ալ կը մեռնէր, բացի թերեւս Սազզզի Տիմիթրօէն, որուն դրամածիտ մը պատրաստելու համար էր իր բոլո՛ր քաշածը։

Պօղոս, Պետրոս ու Յովհաննէս միջոցն էին, իսկ Տիմիթրօ նպատակը, և կարծեմ նպատակը կ'արդարացնէր միջոցները։

Երեքն ալ տեղեակ չէին իրարմէ, թէեւ Տիմիթրօ — անպիտան նշանածը — երեքէն ալ տեղեակ էր։

Ամէն ինչ աղէկ կ'երթար, երբ օրին մէկը Անասթասիա ինկաւ ա՛յն վիճակին մէջ, ուր կրնէր գոռօհնին կը հաննէ և լայն պլուզներ կը հագնին։

Խնդիրը կնճռոտեցաւ հոս ա՛յնչափ, որ ո՛չ մէկ մաթէմաթիկոս պիտի կրնար այդ խնդրին մէջէն ելլել։

Այս խնդիրը լուծելու համար գուցէ դուք «երկը կանոնը» յանձնարարէիք, բայց թուաբանութեան մէջ «չորից կանոն» ի մը բացակայութեան դժբաղդութիւնը պատճառ եւեղաւ, որ Անասթասիա անգամ չկրցաւ լուծել այդ խնդիրը։

Ու խեղճ աղջիկը շատ պիտի լար, եթէ խնդալու փափաք մը չունենար։

Հարցական մեծ նշան մը կը գծագրուէր իր աչքերուն առջեւ և անոր նայելով՝ կ'ըսէր ինքնիրեն։

— Արդեօք ո՞վ։

Ու այս բռնեղծութեան հանելուկին մէջ կը կորսուէր իր «կնիկի միաքը»։

— Սա՛, դա՛, նա՛ ...

Իրա՛ւ ալ ... սատանայի գործն էր այս։ Երբ Պօղոս՝ ճանապարհ-մեօպիէն ներս մտաւ, Անասթասիա արտասուածոր աչքերով պլուեցաւ անոր ճիտին։

Չմոռնա՛նք նշանակել թէ այդ օրը կամ երկուշաբթի էր և կամ ուրրաթ, — այսինքն «Պօղոսին օրը»։

— Որչա՛փ երջանիկ եմ, հօծեց անոր աւանջին՝ շեշտով մը որ նոր հարսի կուսական սարսուռներովը կը սարսռար։

— Իրա՛ւ, պատասխանեց Պօղոս՝ Անասթասիային այս երջանկութիւնը զինքը տեսնելուն վերագրելով և ասոր համար քիչ մը ուռած՝ էրիկ մարդու ապուշ հպարտութիւնով մը։

— Ո՛հ, չե՛ս գիտեր ո՛րչափ ուրախացայ երբ զգացի թէ ... փսփսաց Անասթասիա, որ, չմոռնա՛նք նշանակել, առեղի կերպով կը ստէր այս պարագային։

Պօղոս քիչ մը զարմացաւ և սպասեց որ գեղուհին յայտնէ թէ ի՛նչ զգաց։

Անասթասիա աչքերը խոնարհեցուց — (աշխարհիս ամէնէն անառակ կրնէր անգամ աշուճին խոնարհեցնելու եղանակը քաջ գիտեն) — և քիթին տակէն մրմնջեց։

— Պօղո՛ս, կարծեմ մայր պիտի ըլլամ։

Պօղոս, որ ճանապարհ չէր, տասը ոտք վերցատկեց։

Մազերը գլխուն վրայ տնկուեցան ... խողանակաձեւ։

— Ի՛նչ ըսիր, պօռաց։

Յետոյ ինքզինքին գալով՝

— Կը չնորհաւորեմ, աւելցուց, բայց ատկէ ինծի ի՛նչ։

— Այսինքն դուն ալ հայր պիտի ըլլաս, բացառեց Անասթասիա, որ կը սիրէր mettre les paoints sur les i։

Եթէ ըսեմ որ Պօղոս այս լուրին համար

չառ գոհ եղաւ, չարաչա՛ր զրոյարտած պիտի ըլլամ:

Կարելի բան է որ մարդ գոհ մնայ, երբ գէժը ելլող կին մը յայտնէ իրեն թէ այս օրերս հայր պիտի ըլլայ:

Ձաւակը, ա՛յնքան սպասուած ամուսնութեան մէջ, (թէեւ մեր օրերուն ո՛չ այնչափ), անտանելիօրէն անախորժ սիւրբիւրդ մը կը գառնայ ամուրիութեան մէջ, ուր չենք գիտեր ո՛ւր տեղերնիս պահել նորեկը, որ կուգայ առանց աստծոյ-բարին մը ըսելու:

— Նայի՛նք, նայի՛նք, մրմռաց Պօղոս՝ ուրուն բոլոր քնքը մարած էր:

— Ի՛նչ պիտի նայիս, չէ նէ զաւակնիս պիտի լքես, հծծեց Անասթասիա, որ սկսաւ լալ:

Կին մը որ կուլայ իր մօտալուտ մայրութեան վրայ ... ասոր չափ անտանելի տաղաուկ մը չէ կրցած երեւակայել Մոլիէր:

— Նայինք, տղաս ինծի պիտի նմանի՞ ըսաւ Պօղոս՝ որ աշխարհիս է՛ն անպիքէ մարդն էր սա միջոցիս, իբր թէ եկած ըլլային իրեն հաղորդել որ հազար ոսկիի վնաս մըն էր ունեցած:

Անասթասիա ա՛լ աւելի լալ սկսաւ:

Չեմ գիտեր որ եթէ լալ չգիտնային, ի՛նչ ասոր պիտի խառնէին կիները:

— «Այն ատեն ալ պիտի պոռչտային», չէր նկատէ մէկը ներսէս:

Կ'երեւայ որ Պօղոսի հետ տեղի ունեցած տեսարանին արտասպուտը կամ վերատպուտը արգիլուած չէր, որովհետեւ նոյն արտասուալից խօսակցութիւնը կրկնուեցաւ նաեւ Պետրոսի հետ:

— Պետրո՛ս, ըսաւ Անասթասիա անոր ալ, չե՛ս գիտեր ո՛րչափ երջանիկ եմ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ա՛լ մայրիկ-հայրիկ պիտի ըլլանք:

Այս անակնկալ լուրին վրայ խեղճ տղան երեք օր երեք գիշեր ոչ կրցաւ բան մը ուտել, ոչ ալ բան մը խմել:

Կոկորդը թխմուած էր լկարծես՝ սեղանի պլորուած ծածկոցով մը:

— Ըսէ՛, Պետրոս, երջանիկ չե՛ս, կը հարցնէր Անասթասիա:

— Շա՛տ, շա՛տ, կը կրկնէր խեղճ տղան ապուշցած:

— Եթէ երջանիկ չըլլաս, իսկոտ դժբաղդ պիտի նկատեմ ինքզինքս, որ ա՛յնչափ ապերախօրէն կը վարուիս հետս:

— Ընդհակառակը, Անասթասիա, պատասխանեց Պետրոս՝ որուն սիրտէն արիւն կը հոսէր, շատ երախտապարտ եմ որ զիս հայր ըրիր:

— Չեմ ըսեր որ ամուսնանանք, թէեւ օրէնքը այսպէս կը պահանջէ ...

(Ահա՛ — փակագիծի մէջ — ասորէն սէրեր մշակելու հետեւանք):

Երբ Յովհաննէս եկաւ իր կարգին, Անասթասիա ա՛լ աւելի վարպետօրէն կատարեց իր դերը, որովհետեւ երկու անգամ փորձ էր ըրած և դերը գոց գիտէր:

— Որչափ երջանիկ եմ, Օհաննէ՛ս:

— Հը՞ ...

— Բանի մը օրէն մայր պիտի ըլլամ, և քեզի պիտի պարգեւեմ զաւակ մը որ մեր սիրոյն ծաղիկը պիտի ըլլայ:

Եւայլն ... :

Չեմ կարծեր որ Յովհաննէս իր միտած օրը ա՛յնչափ աւրուի:

Մարդուն խելքին պիտի գար, բայց բարեաղգարար խելք չունէր:

Երեք բարեկամները պատահմամբ շարաթ մը վերջը իրարու հանդիպեցան կազինօն:

Երեքն ալ ա՛յնչափ մտահոգ կ'երեւային, որ տեսնողը պիտի ըսէր թէ՝ սակարանին մէջ բոլոր հարստութիւննին փճացուցած էին սըււնք:

Իրարու սիրտը ջանացին բանալ:

— Ի՛նչ ունիս, Յովհաննէ՛ս, հարցուց Պօղոսը:

— Ձգէ՛, աղբար, skrsjkeմիօ եղաւ ան, գլխուս վրայ փորձանք մը կայ ո՛ր ...

— Ի՛նչ տեսակ:

— Մէթրէս մը ունէինք, իբր թէ ասիկա բաւական չըլլար, հիմակ ալ իրմէ զաւակ մը պիտի ունենամ:

— Ինծի պէ՛տ, վրայ տուաւ Պօղոս:

— Ինծի պէ՛տ, կրկնեց Պետրոս:

Երեք բարեկամները իրարու երես նայեցան զարմանքով:

— Բայց այս քանը ինձի դեռ քանի մը օր առաջ պատահեցաւ, ըսաւ Յովհաննէս:

— Ինձի՛ ալ, աւելցուց Պօղոս:

— Ինձի՛ ալ, նկատեց Պետրոս:

Երեք բարեկամները անգամ մըն ալ մէկը մեկու երես նայեցան արմանքով:

— Կնկան անո՞ւնը, հարցուց Պօղոս՝ Յովհաննէսին:

— Անասթասիա:

— Իմի՛նս ալ, վրայ տուաւ Պետրոս:

— Իմի՛նս ալ, ըսաւ Պօղոս:

— Արդեօ՞ք ... կրկնեցին երեքը մէկ:

Աւա՛ղ, այս «արդեօք» կոտորուոր իրականութիւնն էր:

Ի՞նչ անցաւ նոյն պահուն երեք բարեկամներուն սիրտին մէջէն:

Դժբաղդաբար, Ռէօթէնեան ճառագայթները չեմ և չեմ կրնար լուսանկարել անոնց սիրտը:

Ամէն պարագայի մէջ չեմ կարծեր որ շատ դո՛ւ մնացած ըլլան:

— Երթա՛նք վրէժ լուծել տա՛ անհաւատարիմ կինէն, գոռաց մէկերնին:

— Ի՞նչ կ'ըսէք, աղաղակեց ուրիշ մէկերնին, զաւակնուս ալ պիտի բնենք, անշո՛ւշտ այդ մանուկը մննէ մէկունն է:

— Որո՞ւն:

— Ո՞ր գիտէ:

— Սպասե՛նք և ... չլուսա՛նք, վերջացուց Պօղոս՝ այս լրջութեան մէջ զուարթ նօթը դնելով:

Սպասեցին:

Անասթասիա չարաթ օր մը, իրիկուան դէմ, աշխարհ բերաւ աղուոր խոշոր մանչուկ մը:

Պօղոսին չէր նմաներ:

Պետրոսին չէր նմաներ:

Յովհաննէսին ալ չէր նմաներ:

Հասկա՞ ...

?

Անգո՛ւթ առեղծուած: Անասթասիային նորածին մանչուկը Տիմիթրօին կը նմանէր:

Պօղոս, Պետրոս և Յովհաննէս չա՛տ վիրաւորուեցան, անոր համար թէ՛ ինչո՛ւ զաւակը Անասթասիային, որ իրենց եղած էր, չէր կրեր իրենց ֆապրիքային ... կնիքը:

Աւանակները ... իրարու «նեղինակի իրաւունքը» կապտած էին և չորրորդ մը, անծանօթ մը կը ստորագրէր հատորը:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ԿԱՆԱԿՑ ՇՈՒՐՁ

(ԽՈՇԵՐ)

— Գեղեցիկ կին մը սիրաշահելու պայմանները շատ են, սակայն գլխաւորն ստակ ունենալը եւ անոր շատ compliment տալըն է:

— Եթէ կ'ուզես որ սիրուիդ չվիրաւորուի, անոր քով երբեք այսինչ կիճն աղուոր է մ'ըսէր:

— Տուն մ'առանց կնոջ կը նմանի նա մը առանց դէկի, մարմին մը առանց հոգիի:

— Երկվարդու մ'ի՛ր կնոջ անհաւատարմութեանց համար ներողամիտ բարութիւնը, անմիտ բարութիւն մ'է:

— Կիներն այր մարդոցմէ աւելի (հոգի) կը սիրեն, որովհետեւ դիւրին է անոնց համար սէր մը մոռնալը:

— Կինը ժամանցի առասպելիս ասիւր մ'է, բայց ... վճանգաւոր:

— Կիները զարդերու կը նմանին. հեռուէն դիտելու է զանոնք:

— Գեղեցիկ կիները փայլաբոյր ծաղիկներ են, որոնք առաւօտուն կը ծին եւ անօրի երկվարդիկ անյազաբար կը հոտոտեն զանոնք, եւ երբ երեկոյին քաւածին, զանոնք մէկ կողմ կը նետեն:

— Կնոջ միայն գեղեցիկը աչաց հաճելի է, իսկ բարի-զգեղը սրտի:

— Կինը ստուերի կը նմանի, խոյս կուտայ երբ զայն բռնել փորձենք:

— Անբարոյ կին մը կնեալոյժ նամակի մը նման է, զոր ամէն մարդ կրնայ կարդալ:

— Կիները մանուկներ են, պէտք է զանոնք օրօրել:

— Կին բառին Կ գիրը Գ ի փոխեցեք եւ ուզածը կը մնայ:

— Կիները շատ անգամ դատաւարեան տեղ զգածում կը դնեն, եւ անոր համար է որ կը խաբուին:

— Գեղեցիկ կիներ կան, որոնք մեղուներու պէս իրենց օրքներուն վրայ մեղր ունին, բայց ... անոնց պէս ալ գաղտնի խայրոց:

— Եթէ երկվարդ մ'ի՛ր կնոջ բոլոր փափաքները, ուզածները կատարէ, անվարժի կը մնայ:

Խապիւլ

ՎԱՀՐԱՄ ՍԵՎԱՃԵԱՆ

ԱՆՆԱԿԱԳԻՏԱԿ

Կանանց արտառոց գլխարկներուն հետ ոչ նուազ արտառոց սնանկութիւններու հեղեղանման լուրերը ամէն օր կը լեցնեն մեր օրթերթերը, ազատելով խմբագիրները սուտ չուրելէ։

«Այսինչ տունը դադրեցուցեր է իր վնասումները»։

Վաղն ալ պիտի կարդանք ատոնց հետեւանքները։

«Առժամայ սիւնի կարգուած են այսինչ կամ այնինչ անձերը» եւ այլն։

Եր երբեմն, որ թուականին ճիշտ չեմ գիտեր, երբ մէկը, ըլլար վաճառական, ըլլար խանութպան, սնանկանալու ըլլար, ամբողջ քարեկամներ, ծանօթներ, նամանաւանդ արհեստակիցներ խոռ աչքով կը նայէին, տաքափոխիկ հիւանդութենէ մը բռնուածի պէս՝ հեռու հեռու կը փախչէին իրմէն, և որ աւելին է՝ անպատիւի, գողի տեղ դնելով՝ բռնորովին կը խղէին իրենց յարաբերութիւնը այդ մարդուն հետ։ Հիմա՝ Կուզե՞ս հարուստ հոգակուիլ, կուզե՞ս յարգ պատիւ ստանալ, կուզե՞ս ընկերութեան մէջ փառաւորուիլ, կուզե՞ս ընտանեկան չըջանալներու մէջ թիկնաթու գրաւել, սալօններու շուրջ ըլլալ, և աշխարհ խօսեցնել վրադ ... սնանկացիր։

Այսօր սնանկ մը տոսնապատիկ աւելի յարգ ու պատիւ ունի հրապարակին վրայ, քան այն՝ որ Քոէտի Լիօնէն կամ Պանք Օթօմանը պատրաստ դրամ ունի։

Հին ատեն սնանկութիւնը աղքատութեան հոմանիշն էր, սնանկ ըսելը՝ աղքատ ըսել էր, հիմա, սնանկ ըսելը՝ հարուստ անձնաւորութիւն մը կը մտածանշէ։

Ինչ աղուոր և դիւրին միջոց տնձնիւր պոյը շտկելու համար։

Առաջ ամէն ոք վիճակահանութեան յոյսը ունէր ու առաջին կամ երկրորդ պարգեւէն կոպասէր ամառը Մեծ Կղզի, ձմեռն ալ Բեքայի շիտակը ապրուելու համար, մինչդեռ հիմա ատանկ չէ։

Տաճն հազարով սնանկացիր, հարիւրին եռասուն առաջարկէ (էն ինսաֆիլ տեսակը) և հինգ վեց հազար ներս նետելէդ վերջ՝ պիտի տեսնաս որ Բեքայի շիտակը նստելովդ հանդերձ, քեզի անանկ պիտի դայ որ Խասգիւղի Պատեմիկը խլիլի տան մը մէջ փակուած ես։

Այսօր սնանկը կամուրջէն անցնելու համար կառք կը փնտռէ ու անով կանցնի, թըռամվայ չի նստիր, գոռհիկ համարելով, մինչդեռ առաջ երբ գործին գլուխն էր, Չատիկ Ծնունդ կը վայելէր ատոնք, տափատին վարի մասը ցեխերէն ազատելու համար միայն։ Մնանկը՝ որ առաջ պնակ մը եմեմ խաքայի միջի վեց հոգի սկամպիլ միայն կը խաղար, հիմա մէկ պանքնօթի պրլըմ կը քաշէ է՛ն աղքատաց սովորած փորիկ խաղամոլին քթին իսկ։ Մնանկը՝ որ կիրակիէ կիրակի խաւամա չօրպա սովոր էր ուտել, հիմա իր խոհարարին կապսպրէ որպէս զի եանիի ճաշարանը երթալով պիթօք ալ լա ռիւսը սովորի ու եփէ։ Մնանկը որ առաջ գործէն ելածին պէս տուն իր ընտանիքին, զաւակներուն մօտ կը վազէր և երկու նաւաշտակ ճնկելէ վերջ սեղան կը նստէր, այսօր ատանց Սըլանտիտ հանդիպելու տանը ճամբան չի կրնար գտնել և երկու քուկէսէն առաջ ճաշելը եսնամոլքին կը համարի։

Հապա Տիկի՛նը ...

Հաւկիթէն նոր ելած վառեակ մըն է կարծես այն կինը՝ որ կարեւոր սնանկի մը մականունը կրելու պատիւն ունի։

Լուսցարարուհիին օրական չտալու համար՝ մանտրուքը ինք իր ձեռքովը ընող կինը, որուն ձեռքերը մանքաւ կը կտրէին, գիշերները մինչեւ օտ՝ corliernով չի սրբուի՝ անկողին չի մտնար։ Ֆիստանճի Սուրբիկին կը յաջորդէ՝ Շրիկէլ, և պօթերուն չափերը՝ Հեռալն է որ կառնէ։ Առաջ մինչեւ պղտիկ Արմաշ քարօթ գլխարկով ուխտի գացող

նոյն տիկինն է որ հիմա, կառքով Ղալաթիոյ եկեղեցին կերթայ ամէն հինգշաբթի, կառքը դուրսը կապասէ, և ժամկոչն ալ 20 դրուշ բուռ պուլառ կընդունի:

Առաջուան սանկ-նանկ հիւրերը, հիմա տունին առջեւէն անցնելու իսկ համարձակութիւն չունին, բոլոր տեսնուածները չընորհքովներն են ... մինչ աղէկները:

Վերջապէս պէտք է ըսել որ մանկութիւնը այսօր տեսակ մը բան գործ, այսինքն հարստանալու նորելուկ միջոց մը դարձած է:

Շաքաթ իրիկուն մըն է, ուշ ատին Սըբ-լանսիտէն ներս կը մտնամ բարեկամ մը տեսնելու համար: Հետուն, կըր սեղանի մը շուրջ աչքիս կը դարնէ ծանօթ մը, որուն միշտ կը հանդիպէի ճաշարանապետ Յովսէփ աղայի խանութը, ուր կը յաճախէր ցերեկուան ճաշի համար, և որ սիւսիւ խալիթին հոգի կուտար: Tiens! նոյն անձնաւորութիւնըն էր հիմակուան տեսածս, և մօտը նստողը իր կինը անշուշտ, զի այդ տարիքին մէջ մէքուէս ունենալը իր գործը չէր ... Ի՞նչ փոփոխութիւն Աստուած իմ ... նախ կարծեցի թէ սխալած եմ, նմանութեան պատճառովն տուի պահ մ'ալ, բայց իրականութեան մէջ՝ խալիթասէր ծանօթս էր, նոյն ինքն:

Տիկինը նոր ղէնկինի հովերով, կզակը կախած, աչքերը պզտիկցուցած չորս դին կը նայէր «հիմա առջինը չեմ» ըսել ուղեով կարծես, և ամուսինը ըստ իր հին սովորած փորիկ ունակութեան, դանակին ծայրովը պնակին կը դարնէր «մէզէ կէթիթ» ըսելու համար կառսօնին, որ մէխանայի չըրախ կը կարծէր դեռ:

Բարեկամիս ուշանալէն և կամ զայն չի գտնելէս օգտուելով մօտէն կուսումնասիրէի նոր զենկիները, որոնք հող նստած կասպընջականէին. à leur keif ... :

Ու մտածեցի պահ մը թէ մինչ fabriqua-tearը եռեսուն և վեց ... կեղծ ակօսները իրար կը բերեր ու կը սեղմեր, կարդալով, կրկին կարդալով տեղւոյս ներկայացուցիչին նամակը՝ որուն մէջ բացէ ի բաց գրուած էր honorable failliteը այդ կաշիադէմ հեքիֆին, մինչ ասդին ... նկարագրեցի կարծեմ:

Բարեկամս չուշացաւ. բաւական մը տես-

սակցելէ վերջ, երբ մեր կարգին կը պատ-րաստուէինք մեկնիլ, ասոնք ալ կ'յամ էին ոտքի: Մնանկ աղետաշուքը աջ ձեռքը բալ-թօին թիւին մէջ՝ ձախովը ի դուր կը փրնու-ռէր միւսը, որովհետեւ վարժ չէր մէկ գրուշ բուռ պուլառ ձգելու կառսօնին, որ նոյն պահուն կռնակը սիւնի մը տուած պրկունք-ները կը խածնէր խնդուքը զսպելու համար:

Ու երբ դուրս կելլայինք սալօնէն, քիչ հետուն նոր ղէնկինին տիկինը բէշերը երկու-ձեռքովը վեր առած անձրեւին տակ կը պո-ռար քան կը խօսէր,

— Լանտօ չիգա՞յ ճանրմ ... առ միւսիւ-պէթ առապաները չեմ նստիր ... :

Անշուշտ առանց մտաբերելու թէ՛ այսօր կեղծ մանկութեամբ լանտօ փնտռողը, վաղը թաւանվայն ալ չի պիտի կրնար նստիլ ... :

Արդէն այս կարգի մարդիք երբեք և երբեք չեն կրնար օձիքնին ազատել Արդա-րութեան ձեռքէն և իրենց արդար պատիժը կը կրեն անպատճառ:

ԳԵՊԻՈՒՄ

Յ. Գ. — Փափաքելի էր որ Լիլա՝ իր երկներանգ վրձինով զաւեշտական թապլօ մը գծեր, այս կարգի բնասնիքներու, ալ ա-ւելի օգտակար դաս մը տուած ըլլալու հա-մար ամէն անոնց՝ որոնք շահը և ճոխ աղ-րուստը առաւ-փախաւութեան մէջ կը փրնու-ռեն:

ՆՈՅՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՄԻՆՁՆԻ ՓԵՏՐՈՒԱՐ

20 դրէի գիրք առնողին 10 դրէի գիրք ձրի Բժշկական մարմնամարդութիւն . . . 7րշ 5
Գեղեցկութիւնը պահելու և աւելցը-
նելու արուեստը » 5
Խնամածութիւն կամ առաջնորդ մարդ փր 20
Մեր երկրաւոր բնակարանը 7րշ 3
Նախնական դիտելիք առողջապահու-
թեան » 1
Պատմութիւն Անգլ. վաճառականու-
թեան » 6
Յրանսերէն կամ Անգլիերէն խօսելու
միակ զիրքը Մայսթէրլաֆթ սիս-
թէմ » 30
Թղթաարի ծախքը մեր կողմէ
Մրցում. — Օրացոյց փառակաղմ . . 60 փր.
» Թաւշապատ . 100 »
Գաւառներու համար 10 փր. աւելի.
Դիմել Մարգարեան գրատուն, Մէրճան-
փողոց թիւ 57:

ՄԵՌԵԼԸ ԿՈՂՁՆՆԱՅ...

ԱՆՕԹԻ ՓԵՍԱՆԵՐ

— Մեզայ է Տէր Յիսուս Քրիստոս, պիտի պրտան այն ամէն կիները՝ որոնք իմ գըր- ուածքներէս համ կ'առնէն ... Նէվադիլ չե- ղած անշուշտ, ա՛տ ի՞նչ է քի աս չարթու- կէր գրեր է ...

Եւ սակայն պէտք է գիտնալ որ, ամէն աչքերը անկիւնը տնկողը՝ հողին չի փչէր, և ամէն հողկարքի՝ անգրաշխարհային բասօ չեա կրնար տալ, և ահա ինչու խելացի մար- դիք շատ անգամ հիւանդին շունչը կտրելէն վերջ ըծիչկին լուր կուտան, որպէս զի լաւ կերպով հաստատուի պարագան: Այս կէտը ընդհանրապէս գործադրութեան կը դնեն հա- րուստ և կծծի հօր մը զաւակները, որպէս զի ծերուկին արթննալովը իրենց երկներանգ երաղները յօգս չի ցնդին: Եւ իրօք ալ խել- քի գալիք բան է շիտակը, երբ մարդուս խնդալը փարը կը մնայ ...:

Վայ ան մարդուն՝ որ իր ետին collosale հարստութիւն մը պիտի ձգէ, և թէ հիւսն- ղութեան մը պատճառաւ անկողինն է ին- կած: Իմ մասիս պիտի ուղի՛ի հարուստ ապ- ըիլ և աղքատ մտնիլ, որպէս զի ժառան- գորդներս Գարրիէլ հրեշտակէն առաջ գըլ- խուս վրայ չի թառին ու չսպասեն չեմեհ նեռեղուս, նամանաւանդ եթէ փեսայներ ու- նենամ, որոնք ժառանգական սեղանին գա- ցրգ-պէյսէները կ'ըլլան միշտ, զաւակներէ աւելի լիւբճի, և աննոցմէ առաւել անօթի:

Մեր այս գաղափարը պատկերով մը բա- ցատրենք ու պարզենք հոս վարը, որպէս զի մեր ընթերցողները եւ ընթերցողհիները լաւ հոմոլուին արեւէն 140,000 անգամ աւելի պայծառ ճշմարտութեան:

* * *

Գաւառէն բերած հինգ հարիւր ոսկին՝ տարիներու ընթացքին մէջ հինգ հազարի հասցնող Սիոս աղային եռայարկ տանը էն միծ սենեակն է տեսարանը: Սիոս աղա սաղլը սօլլու, սաթլիճանէն բռնուած՝ անկիւնը դըր- ուած մահճակալին մէջ ընկողմանած՝ հաղիւ մընայ շնջել, ու տկար հեւք մը թեթեւօրէն կարմիրը ծածկող վերմալը կը շարժէ:

Կինը Մարեէնէ, ութ օրէ ի վեր չի սանտ- րած գլխուն վրայ ֆօռօշ ու ցիրուցան մա- ղերով մօտը՝ բազմոցին վրայ նստած, եէլէ բռնուածի պէս ծունգերը կը չփէ, ատեն ա- տեն իր ճամբորդ ամուսնոյն վրայ ձգելով ետիւր աչքերը, խոնաւ ու բիրաթափ:

Երկու հոսուկ զաւակները մէկ մէկ սի- կառ բերաննին՝ դուրսի սօֆան կարթ կը զարնեն (ոլթային հայերէնը՝ եթէ կ'ընդունիք) մինչ երկու փեսաները, մեռելի մոմերու պէս հիւանդին մահճակալին երկու կողմը գրուած, պատկեր հանելու պէս անշարժ՝ աչքին մէջը կը նային: Աղջիկ զաւակներէն մին ոտքերը, միւսն ալ բազկերակները կը չփեն:

Կարծեմ ձեր մտքերուն մէջ գծեցիք պատ- կերը սենեակին, ալ հիմա անցնինք բուն նիւթին և խօսակցութեան:

— Նէֆէսի քէսիլտի հէ՞... խօսք կ'առ- նէ մենք փեսան, պէխերուն տակ թեթեւ ժպիտ մը յօրինելով:

— Եօգ ճանըմ, ամա էլի դուլաղընտո տըր, կը պատասխանէ միւսը, անկաճը կուրծ- քին դնելով ...

— Հէ՞ ... մեռա՞ւ ... աղապստ ... կը պոռա աղջիկը:

— Հայրիկ ... կը բացադանչէ քոյրը վրան նետուելով:

— Քա ճանըմ ի՞նչ կըլլաք կոր, տահա ողջ է ամա յոյս չիգայ ... կըսէ փեսան, ձեզի՛ ինչ կըլլայ կոր, հետը թաղուելու չէ՞ք եա ... քէշկէ մենք ալ անոր խըտար տա- րէինք ... իմ աղապստ իծծունը հին կին միուաւ ...

— Պէնիմքի տէ էօյլէ, ետըմ ինկիլիզի տօլտուրամատը զավալը ... կըսէ միւսը, մինչ տիկին Մարեէնէ սօքի ելլալով ...

— Քա ճանըմ ու հէքիմքն գացէք մէ- կերնիդ, աս վրան նայելով կըլլա՞յ ... չօգ չէ՞յ, մէյմը հէքիմը պէրենք տէ արուն մը առնել տանք, կ'ըսէ:

— Տուտուս թէլաշ մընէր, հէքիմը դա- լու տէ հոգի փչելու չէ, ձգեցէք յի մարդը

ըռահաթ թէսլիմ ըլլայ, կըսեն երկու փե-
սաները մէկ բերան, էօրսէլէմիշ ընելու ...
ի՛նչ տեղը կայ ...

— Էյ չէնէ արթնցուցէք տէ տա իլաճէն
խաշըխ մը տահա տանք ...

— Սո՛ւս ... կը քնանայ կոր ճանը՞մ ...
Քսոթլախ կըլլայ հաքէն ըսելով երկու տի-
պար փեսայները իրարու կը մօտենան:

— Պանա պագ, թանթանա իսթէմէզ,
պիր վարդապետ, տէօրթ բարազ, տէօրթ
թանէ տէ տիրացու չօճուղը, հէ՛, նէ տէրսին...

— Պիզտէն կիտէճէք տէյի՛լ մի, օ պիլէ
չօգ ալըր, նէ՛ վար, քիմէ ճախա իտէճէյիզ...
կէնէ պօլ պօլ պաշլամա, պէնիմ իւմիւտիւմ
թէքմիլ պու մէրաստա ալըր, զաթէն պի-
լիրսին եա, էվէնտիյիմիզտէ սանտըզ տօլ-
տուրմատըզ ...

— Տուր պագալըմ տըշարքի անաճլար նէ
էֆքեարտա տըրլար ...

— Օ տա վար եա, պագ պիզ օնլարը
ռենթալըզ ...

Ու մինչ ասոնք կը խօսակցէին սպանիա-
կան դղեակներ շինելով ուտելիք ժառանգ-
նուն վրայ, դուրսը երկու եղբօր միջեւ սա
խօսակցութիւնը կանցնէր:

— Լեւոն, մէյմը անկաճզ դիր, նայէ ինչ
ջուրի վրայ է գործը ...

— Տահա չեղաւ ծօ՛, ի՛նչ սապըռսըզ եա,
չի նայիս ծան ծուռն չիգայ ...

— Լեւոն,

— Էյ ...

— Գիտե՛ս եա, բօստալները օխտնէն մէյ-
մը պիտի ուտեն ... անանկ եաղմա չիգայ,
թամ բայ չիմ կերցունէր ...

— Աղէկ ամա, Մառտիկ աղան մօռտօ-
վինա մը չի դառցունէ ...

— Եաղմա եօգ, եա եռսուն տարի է աս
օրին կը պէքլէյէմ կոր, գիտե՛ս եա, օսկի մը
կուզէինք նէ եանկըն վար կը պօռար ...

— Սուս նայինք, ներսը խօրաթային ծա-
ները շատցան ...

— Ան լմնցած ըլլար նէ, մարս եաղա-
ռան կը բուրցունէր, կակոս դո՛ւն ալ, հիմա
ան ձգէ՛ եա, մաղազան ի՛նչ պիտի ընէք ծօ՛,
տէվամ ընենք պիտի ...

— Ես հիսէս առնելուս պէս զատ գործ

պիտի բռնեմ, ալէվաճութին պիտի ընեմ,
հարուրին երկու հարուր քեար կայ ...

— Խայիպ ընես նէ՛ մանղըրը ի՛նչ է չեմ,
ի տար գիտցած ըլլաս, ես պիտի շարունա-
կեմ ...

— Էհ, իմ բայըս կուտա՞ք աէ, հաքէն
ի՛նչ կուզէք ան կնէք ...

Ու հազիւ թէ պիտի շարունակէին խօս-
ուըռտիլ, մայրերնին դուրս ելլալով,

— Մօ եալրունես, հէքի ...

— Մեռա՛ւ քա տուտու, եղածը չեղածը
կըպեմ ...

— Պերաննիզ խեր պացէք ծօ՛, ուղուռ-
սուզներ, հայտէ գացէք հէքիմին ըսէք քի՛-
մէյ մը գայ նայի, նէֆէսը բէք սէյրէկ կել-
լայ կոր աղապային:

— Լաստիկս ճուր կառնէ կոր տուտու,
թող Թորգոմը երթայ ...

— Քա ճանը՞մ ես երթալու չեմ, տիրի
տիրի միւրցունենք մարդը ...

— Ի՛նչ ընեմ ճանըմ, մէրասխօըր մինակ
եա չեմ եա, տիրէկ տիրէկ փեսաները ներսը
կայներ են ...

— Հա ամա մինք հոս պէտք է քի գըտ-
նուինք կըսեն կոր, եաթախին քովը կեցեր
են ...

— Հա՛ ... եաղմա կար, մենք ալ գործ
ռենինք, եանի օրօտում կը հանեմ ... ըսե՛մ
տէ ...

— Քա եալրո՞ւմ, հարերնիզ ներսը չէնեէ
կը նեաէ կոր, հէքիմ վազցուցէք ...

— Տուտու, ախպարըս հիմակուրնէ պօյ
կը քաշէ կոր, կըսէ քի, ես մաղաղային հի-
սէս առնեմ ալէվա պիտի խաղամ տէյի ...

— Վո՛ւյ ... աս մարդը տահա աչքը չի
կոցած բայ բաթինի ելաք, հէլէ հէքիմ մը
բերէք, ծուռը գլխուս ...

Նոյն պահուն երկու փեսայները կրակ
կտրած դուրս կը վազեն,

— Ո՞ւր ես, հոս եկուր զոքանջ հանըմ,
եա կարգուեցայ նէ, չըսի՞ք քի թառախճի-
ներուն մէջի խանութը նէմզուրինն է տէյի ...

— Հէ՛ ... կըսէ ծերուկը շուարած և չի
կրնալով բան մը հասկնալ:

— Դուռն իլէն աղապան խօսք չի տուի՞ք
քի խանութ մը պիտի տանք տէյի ...

— Էօյէ շէյ եօգ, վազթընտա իշինիդի

տիւղէթէյիտինիւ ... պիր սիւքիւրկէ աչըգ-
տան ալմագ օլմաղ, նէ վար ըսա բայ բա-
ժին օլաճագ:

— Քա գուզում եավրուներս հէքիմին
վաղէիք ...

— Նա ինչ կըսեմ՝ դուն ինչ կըսես կը-
նիկ, դուն ալ չաչըրմիչ ես ըրեր, քա սա
փեսադ կէօզ կէօրէ խանութին մէկը կըլլել
կուզէ կոր ... ես քէսէին խօսիմ եմ ...

— Քա հիմա վաղ անցէք, հէրիֆը աչ-
քերը կոցէ տէ ետքը իրար կզեցէք ...

— Ինծի նայէ տուտու, խօսք կառնէ
«նենծ տղան, սա տէֆթէրները օւթան հա-
նենք տէ մէկ թառափէն հիսապի նստինք,
զէրէ ասոնք թարխանա չօրպասի պիտի ընեն
եղածն ալ չեղածն ալ ...

— Աչկա ելլայ, տիրիւմիչ ըլլար տէ սա
հալերնիդ տեսնար, ծօ՛ հարերնիդ է ծօ՛,
եապանճի չէ ներսը պառկողը, չորնամ ...

— Ալլահալէմ դուն օխճութանը պոչդ
շտկեցի՞ր ... քիմ պիլիւր ինչ ճիւղէներով
պերնէն թախրիւր աւիր տէ հիմա մեզի պե-
քան կընես կոր ... կըսէ փեսան սիկառ մը
պլորելով, մինչ ներսէն մեծ աղջիկը դուրս
վաղելով,

— Տուտո՛ւ, տուտո՛ւ, նէֆէսը կտրե-
ցաւ ... աչկա ելլայ թէսլիմ կըլլայ կոր ...

— Քա հէքիմ մը քա ... Աստուծու սի-
րուն հէքիմ մը ... մախաթին սիւլիւկ ...
կը պոռայ միւս քոյրը լալով:

— Քա աղջիկս, անաճ սիւլիւկներ կա՛ն
ամա՛, քայային փակեր են, ո՛վ պիտի եր-
թայ ճար ճարակ ընէ, կըսէ տիկին Մարեէնէ:

— Ինծի նայէ Սրբուհի, կըսէ մեծ փե-
սան, խելք թոցունել չուզէր, տիխաթ ըրէ-
քի հոստեղէն բան չի թռի, ան ներսը լմըն-
ցաւ, ինչ ընէ՛նք, խամէթը ասխտար է ե-
ղէր ...

— Տէր ողորմեայ, զահէր աչճի էր մար-
դը քի խամէթը ասխտար է եղէր կըսես կոր,
կընդմիջէ տիկին Մարեէնէ արցունքները
սրբելով:

— Հիմա սա գործերնիս սըրային դնենք
տէ ետքէն չէշմէի պէս արցունք թափեցէք,
մէյ մը քի սա գոց օտային բալինքները օռ-
թան ելլալու են, աղապային մալը մէլալը

թափենք նայինք, էօլիւմ հագ մէրաս հէ-
լալ ... կըսէ փեսան թեւերը ոտթթած:

— Ճըղակտոր ելլաք քի հէրիֆին նէֆէսը
վրան իքէն սօյիճութան էլաք ... մէյ մը
ներս երթամ, պէլքի ճուր մը բան մը կուզէ
ըսելով՝ Մարեէնէ ներս կերթայ, մինչ դուր-
սը տղաքը փեսաներուն հետ կսկսին իրար
ուտել:

Տեսարանը անսկարագրելի է պէտք է ը-
սել, երկու եղբայր, երկու փեսայ և երկու
քոյր, ընդամենը վեց հոգի, վեց մօռթունի-
ներ, որոնք կը պատրաստուին մեռելէն ա-
ռաջ մատուկը՝ դրամին մատուկը վերցնել,
մինչ ներսը կէս հոգեւարգ Սիոս աղան տկար
չնջառութեամբ մը կը պատրաստուի ջուել:

— Շիմէի էլինէ քէհատ քալէմ ալ կըսէ
մեծ փեսան պզտիկին, պէն սէօյլէիմ սէն եազ:

— Անանկ բան չիդայ, ամէնքս ալ գը-
րենք պիտի, եաղմա եօզ, կը ձայնէ Լեռն
մեծ զաւակը կէս-հանգուցեալին:

— Անանկ է եա, ամէնքս ալ հիստէտար
ենք, պէտք է քի գրենք, սա ալ ըսեմ քի
աղջիկները օխտէն մէյ մը պիտի ուտեն ...

— Ան քու գիտնալիք բանըդ չէ, նախը-
թը հիսապ կընենք կոր, ո՛ւր է սա Հրանտ
էֆ. Ասատուրին հանած տարեկան օրացոյցը,
հոն տեղը էնանէսիովը գրած է, տա գիրքը
պերէք ...

— Շիմտի սէն պանա պագ, շու էվ իլէն
պահչէի, պիր քէրէ եա՛ղ ...

— Բէք էյի, պահչէնին ուճունտաքի քիւ-
մէս իլէն թավուգլա՛ր ... կընդմիջէ միւս
փեսան:

— Անոնք ես կօլօշկայ եմ դրեր ... խա-
նատին մէկ թիւյը պիլէ չեմ իտար ... կը
պոռայ պզտիկ տղան, որուն պիսերէն մէկ
մէկ մարդ կը կախուէր:

— Ինծի նայեցէք ախպարիկներս, մու-
հապէթով բայ բաժին ըրէք քի ծաներնիս
դուրս չելլայ, հիմա ան սա բապուճիս խը-
տար լեզունին դուրս պիտի ձգեն, մեզ ֆաս-
լը պիտի ընեն քի, մէրասի խըռ հանեցին
տէյի, գուզում ախպարիկներս ամօթ է ...

— Դուն սուս քա, կարգուած ատենիդ
ավուճ ավուճ փարայ տալ տուիք, հարուր-
ներով ալ ճէհէզի մասրաֆ ըրիք, հիմա կէնէ

քիթներնիդ մէջը խօթեցիք իքնեճի տէ՛ֆա մէյ մըն ալ քաշեցէք նայինք ...

— Եա նէ՞ զանն էթտին, չըպ չըպլա՞գ մը ալաճաղըտըմ գըզգարտաշընը, հէ՞, էօյլէ գազ պէյինլի ինսան տէյիլ գարչընտաքի ... պիթ թամում հագգըմը իսթէրիմ ... կը պաւտասխանէ փեսան աչքերը եօղունոս չանաղիի պէս բացած :

— Քա ոտքերնիդ պազնեմ, քիչ մը կամաց, ամէն մէկ պօռալնուդ վեր վեր կը նետուի կոր մարդը, կըսէ արիկն Մարեհնէ սենեկին դուռը բանալով,

— Պէ ճանըմ, անոր գործը լմնցեր է ալթըխ, եօղանը վրան տուր տէ դուն դուրս ելիր, թալուխ մօթած չունիս, հինգ թագիգէ կը թօթուըուի իշտէ ամա՛ն ... հիմա գործերնիս ձգենք տէ մեռելը մտմտանք պիտի ... կըսէ փեսան հիյէթէ դուրս ելլալով :

— Պէ կալրում, հոգին վրան է տահա մարդուն, երկու անգամ մը աչքերը բացաւ ինծի նայեցաւ, լէպլէպիէն խոշոր երկու չիֆթ արցունք պիլէ եկաւ աչկէն ... մէյ մը քովը եկէք ...

— Եա անոր քովը գալիք մարդուն խապար խրկեցի, Ժամկոչը ուր էնէ հիմա կուգայ, մեռելն ալ ես լուալու չե՞մ եա, չօգ չէ՛յ ...

— Նասըլ մեռել օրդտի, նէֆէսը վրան է ...

— Անմատա երկնցուցիք քա՞, ըսելով մեծ փեսան շտապաւ ներս կը մոնայ վերմալը ուժով մը վրան կը գոցէ և դուրս կելլայ, նա՛ իշտէ եղաւ գնաց, ալթըխ նէ նէֆէսը կը տեսնաս նէ ալ արցունքը, սըտեղ նստէ տէ բայ բաժինին մուխուֆ եղիր ...

Քիչ ետքը դուռը կը դարնուի և սպասունին կուգայ իմացնել թէ տօթթօը եկաւ :

— Գնայ ըսէ քի մեռաւ տէյի քա Սըրբուհի, նաֆիլէ գահմէթ չընէ, հիմա վեր ելլալու ըլլա՞յ նէ վիզիթա տալու է ...

Եւ սակայն տօթթօը ձեռնոցները հանելով վեր կելլայ :

— Բարի լոյս ձեզ ... ինտո՞ր է նայինք հիւանդնի՞ս ...

— Սուս եղիր տօթթօն էֆէնտի, սէպէքի լմնցաւ ...

— Ա՛ ... այդչափ շուտ յոյսերնիդ մի

կտրէք, ես անոր անանկ դեղ մը տուած եմ որ, իրաւ թէ մարդը մեռելի պէս կընէ, բայց վերջէն չատ օղուա կը տեսնայ, անոր տալղընութիւնը դեղին ազդեցութիւնէն է ...

— Վույ արեւուս կոտորտիմ դուալս, ա՛ճապ պիտի ողջուննա՞յ ... կըսէ տիկին Մարեհնէ արցունքները սրբելով ...

— Մէյ մը նայինք տէ բան մը կընենք կըսէ ու կսկսի խնդալ, միւսիւ տօթթօը, մինչ փեսայներէն մին խօսք առնելով,

— Զահմէթ էթմէ տօթթօն, պիթտի, պիթտի ...

— Պիր պադալըմ ճանըմ, պէն վէրափյիմ իլաճա կիւվէնիյօըմ ... :

Ու երբ բժիշկը հիւանդին կը մօտենայ, բաղկերակը ձեռք կառնէ, յանկարծ մեռելը աչքը բանալով ...

— Պուտ մը ջուր ...

— Նասըլ ես աղապա, կը հարցնէ բժիշկը ...

— Անդին դացի ... եկայ տօթթօն ...

— Սաղ սէլամէթ չիդայիր կը մաւտան դուրսէն :

— Տուած դեղերս չատ լաւ օղուս եմ ըրեր ... կըսէ բժիշկը ...

— Սաղ սէլամէթ չիդայիր կը կրկնուի դուրսէն :


— Ալ վախը անցուցինք տուտուս, հիմա խուվէթի իլաճ պիտի տամ, աչքերնիդ լուս, ես վրան ծածկեցէք մոռցայ ըսելու, ֆախաթ դուք չը գիտնալով եօղանը մինչեւ դուռը ծածկեր էք, աղէկ մը քորունէր է, զէհիրը դուրս է քաշէր ...

— Պէյէնտին հափաղընա ծօ՛, էչէկ հէրիֆ, սէն էօլտիւ տէյի իւզէրինի էօրթտիւն, մէյէր հարաղըն բանդէհիր իմիշ ... կըսէ միւս փեսան ...

(Զգի վարագոյրն)

Բարոյական . — Աղջիկ գուկի տէր ծընողք որչափ կարելի է ուշադրութիւն ընելու են որ՝ աղջիկին կնոջը ստակովը ապրուս ճարող փեսաներէ հեռու մնան :

ԼԷԼԱ



Ուր Ամբակումի յուղար-
կաւորութիւնը տեղի կ'ու-
նենայ, .. այս եղերուն մէջ:

Ահաւասիկ «Հանրագիտակ» ի այս էջին
մէջ դրուած է չքեղ մահաբեմի մը վրայ Ամ-
բակումի ընկուզէնիէ դադաղը, — որուն վը-
րայ Անմուտիկի ծաղիկներէ պսակ մը զե-
տեղուած է — և որուն շուրջը եօթը մոմեր
կը հեծկտան իր վրայ, իրենց արցունքները
սեւ շղարչներէն վար կաթկթցնելով:

Բայց ինչո՞ւ զանգակները չեն հնչեր կոր...
Սա ժամկոչը ինծի կանչեցէք:

— Ժամկո՛չ, ինչո՞ւ կոչնակ չէք զարնէր
կոր ...

— Աղա՛, Թաղական աղաները տառըմիշ
կ'ըլան ...

— Ի՛նչ տէի ...

— Կըսեն ուր, փարայի կէօրէ է զանգա-
կի չաղումն ...

— Փարային մի՛ նայիք, զարկէք ճանմո՛...

— Ո՞ր խամբանան կուզես աղա՛ ...

— Ո՞րը ինչ է, քանի տեղակ զանգակ
կայ որ ...

— Աղքատի կայ, զէնկիւնի կայ ...

— Վա՛յ, էյ զէնկիւնիէն զարկէք ...

Եւ սկսաւ զանգակը ...

Տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ.

Ջահերը վառուեցան:

Ո՛ւհ, բազմութիւնը նայէ սիրելիս, նե՞րս
կը խուժեն կոր:

Ահաւասիկ Ամբակումի դերձակը, որ ար-
ցունքը աչքերուն ներս կը մանէ... առնելի-
քը չի կրնալ զանձեւուն համար:

Ահա մեր թերթերուն խմբագիրները ...
ուռեցած ներս մտան:

Ահա Յ. Մամբեան ներս մտաւ, մէկ թեւը
«Խաչատուր Միսախանը» առած և միւս
թեւը «Տերոյեց» ը:

Ահա ես կը տեսնեմ, հարկաւ դուք ալ
կը տեսնէք Միմօն Գարամանեանը որ ներս
մտաւ իր «բարեկիրք աղջիկ»ովը ...:

Ահաւասիկ մի՛ զիպասանը Քասիմ՝ «Տու-
նէն ցերս» մտնալու պէս գաւթիթը մտաւ,
դրան քովէն ձեռքը երեքցնելով կը քաշէ
Երուանդ Տէր Անդրէասեան և «Աւխարհա-
բար շարական» մը կ'երգէ քիթին տակէն և
ժամկոչն ալ երեսը կը նայի:

Զիֆթէ-Սարաֆը երեւոյց վերջապէս որ
ահա «Միսախան» մը հետ ներս մտաւ որ
ինչպէս գիտէք «արկածներ» ունեցած է...

Զըսի որ սիրտի գայ, ահա Ենովք Ար-
մէնը որ համաչափ քաղերով և 999 ոսկինոց
«կիցը» թեւը առած ներս մտաւ:

Ահա Շամօտանձեան Միքայէլ սիգանմ
քաղուածքով կերեւայ, մէկ թեւը «Դեռասի
աղջիկ» և միւսը «Դեռասի մանչ» մը առած
և անոնց ետեւէն կը քայէ ահա Օննիկ Ար-
զումանը, ուր անոնց հայրագիրն է:

Եւ ահա Տէր-Յակոբեանը, որ ակնոցը աչ-
քը — բացառութեամբ — և լամբակին «ծաղիկ»
մը խոթած երեւոյց:

Եւ ամէնքը իրենց յարմար տեղերը նըս-
տեցան:

Հինգ վայրկեան անյուս:

Տեսէ՛ք, նստողները կ'երերան ... ցորե-
նի հասկերու պէս:

Ահա քահանաները, որոնք ամէնքը հեր-
մակներ հագած են, ըստ բաղձանոց Ամբա-
կումի:

Քահանաները դադաղը կը շրջապատեն և
Սրբազանին կ'սպասեն:

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դադաղին քովը դըր-
ուած մոմակալներէն մէկին վրայէն մոմը պի-
տի իյնայ ...

Նոյն իսկ մոմերուն համբերութիւնը հա-
տած է սիրելիս:

Քասիմ ժամացոյցին ակնարկ մը նետեց:
Եւ ահա Սրբազանը ներս մտաւ:

«Օրհնեալ Տէր մեր ...»:

Ահա վա՛սան փափազեանի անձնական
կառքը դուրսը կեցաւ, և ահա օրուան դա-
ւեշտագիրը ակնոցին տակէն չորս կողմը աչ-
նարկներ նետելով ներս կը մանէ, և որուն

առջևէն տեսէ՛ք, ձեռամբարձ լիա ծաղիկ-
ներու պսակը կը բերին, ահա դադաղին վը-
րայ դրին:

Ի ծննդենէ տիրացուներ և ամաթէօռ տի-
րացուներ, ամէնուն ձեռքը մէյմէկ երգեցո-
ղութիւն, (ընդարձակ, Դըլըճճեան, մօտ օ-
գէն հրատարակիչի), ահա սկսան Գոտեա
Տէր զայնոսիկը:

Ո՛հ, կը յուզուիմ կոր, վրաս փուշ փուշ
կըլլայ, լալս կուգայ, և եթէ չի լամ ...
պիտի խնդամ, բայց չատօնց ի վեր է որ չէի
լացած, ահա յարմար սահաթը և չբախցնենք:

Հի՛ւ, իւհի՛ւ, հի՛ւ ...

Բայց սրբան երկար կը տեսէ կոր սիրե-
լիս:

«Եւ փառք յաւիտեանս ամէն»:

Եւ նորէն դանգակները:

Տանկ, տանկ, տանկ ...

Բայց ես դուրս նետուիմ, քանի որ դամ-
բանականը պիտի կարդամ:

Ամբակումի դադաղը բա-
կը հանեցին զանգակներու
ղողանչիւնին մէջ, եւ Ան-
մեռուկ ձեռքը դեպի զան-
գակները երկնցներով սկը-
սաւ իր դամբանականը,
որ Ամբակում գրած է իր
ողջութեանը ...:

Քիչ մը կեցէ՛ք, սիրելիներս, ետքն ալ
պիտի դարնել ու ... գլուխ արդուկել ...

Դո՛ւք ալ դադաղակիրներ, դադաղը վա՛ր
դրէք ... ուսերնիդ չեկայ ցաւի ...

Ո՛ւր կը տանիք կոր Ամբակումը և ինչ
խրաւունքով կը տանիք կոր բարեկամս ...
որ մինակ աչքերը գոցելու յանցանքը գոր-
ծած է ...

Թերեւս կը քնանա՞յ կոր իմ սիրելի բա-
րեկամս ...

Ա՛հ, Ամբակում, Ամբակում, ելի՛ր, ե-
լի՛ր, և անկէ ետքը նորէն պատկէ ... եթէ
դեռ քնանալ կուզես ...

Ո՛հ, քու ամէնէն երկարատեւ քունդ
տասներկու ժամ էր, այս ի՞նչպէս քուն էր
դր երեսուն երկու ժամն ալ անցաւ ու դեռ
չես արթննար ...

Ելի՛ր, սրով՛նեաւ դուն դեռ պե՛տք է
որ ապրիս ...

Դո՛ւն, որով՛նեաւ կարող ես կեղծիկի
գիմակները քաշել պատռել ...

Դո՛ւն, Անարարոյականութիւնը պիտի սըր-
բես սրբադրես ... փորձի մը պէս:

Դո՛ւն, սիրելիս, մեր աղտոտ բարքերը...
աղտոտ լաթերու պէս պիտի լուսաս:

Ա՛հ Ամբակում, ելի՛ր, եկուր խօսքս
մտիկ ըրէ ...

Բայց չես լսեր, կամ լսել չես ուզեր ...
Ճիշտ քեզի պէս կ'ընեն շատ մը մար-

դիկ, կիմանան՝ բայց չիմանալու կը զարնին:
Ո՛հ, որոշած ես ձայն չհանել ...

Նման անոնց, որ ամէն գայթակղութիւն-
ներ կը տեսնեն ու ձայն չեն հաներ:

Բայց ո՛վ Ամբակում, դուն ճշմարտու-
թիւնն էիր:

Եւ քեզի կարգ մը մարդիկ թաղել կու-
ղեն, վրադ հոլով գոցել ու քար մընալ
դնել:

Ես ապահով եմ որ դո՛ւն չպիտի թաղ-
ուիս ...

Հիմակ ըսէ սիրելիս, ո՛ր ճամբով պիտի
երթաս ասդէնականէն անդէնականը կամ
ըստ Թլկատիւնցիի՝ Էնդի դեմը:

Ծովով թէ ցամաքով պիտի ճամբորդես:
Դժողք պիտի այցելէս Տանթէի պէս, չէ
թէ Արքայութիւն:

Նայէ որ ո՛ւր որ երթաս, մեզի չղրկես
... թղթակցութիւններէդ ... ես անոնք հոս
տողը հինգ շաբաթի կը ծախսեմ մեր լրագիր-
ներուն ... և հասոյթը մանսպոսով քեզի
կը ղրկեմ ...

Մարքոսիին անթել հեռագիրով լուր դըր-
կեցի որ, մեզի անթել հեռագիրի երկու կա-
յաններ ղրկէ, մէկը դուն կառնես մէկը ես եւ
իրարու հետ կը հողորդակցինք:

Ուրիշ յանձնարարութիւն մըն ալ. դուն
աղուոր տեսարաններ կը նկարէիր իւղաներկ,
ուստի, եթէ կրնաս Դժողքին տեսարանները
նկարէ ու խնամով ամպլաժ ընելէդ ետքը,
ֆոյի բօսքալով ինծի ղրկէ:

Նա՞յէ որ ղրկածներուդ մէջ Սատանայի
մը պատկերը գտնուի և կոտորուոր տեսա-
կէն, որպէսզի անոր եղջիւրները բաղդա-

առեթեան դնեմ՝ կարդ մը մարդոցիններուն հետ . . . :

Գնայ, դնայ, ուշ մի մնար, քանի որ յորոշած ես երթալու . . . :

Տարէ՛ք, դադաղակիրներ, ո՛ւր կուգէք յարէ՛ք՝ ձեր կամքը ըլլայ . . .

Դուք ալ զանգակներ, հնչեցէ՛ք հնչեցէ՛ք, մինչեւ որ ձեր լեզուակը փրթի . . . ու ժամկոչին գլխուն իյնայ . . . :

Դագաղը դուրս հանեցին, ֆառածի մեռելակառփի մը մէջ գետեղեցին եւ ետեւէն քաջում կառփերով չուեցին դեպի Պաշրգըր, ուր մեկ մեքր շայնութեամբ փոս մը քացուած կայ եւ փոսին մօտը տապանափար մը ուրուն վրայ հետեւեալները գրուած է :



ԱՍՏ ՀԱՆԳՉԻ

ԱՄԲԱԿՈՒՄ

Այս է տապան Ամբակումին,
Որ չնայելով իր անկումին,
Եկաւ ինկաւ այս ֆարին տակ,
Ինքն ալ եղաւ մահուան կատակ:
Ազուռ խմեց, կերաւ աղեկ,
Կիներնք քրած իրեն . . . դեկ:
Չար եր, ետք եղաւ բարի,
Ուժ չտաւ գրաբարի:
Բարե՛ւ տուաւ բարեւողին,
Բերինք դպցուց շատ փիչ օղին:
Բայց իրեն ջուր ըստ գինին՝
Չնայեցաւ երբեք գինին:
Նա՛ մամբորդեց ա՛յնքան երկար-
կալաքայի թիւնելով յար:
Սիրած խաղն եր միշտ մազուրֆան
Որով նետե՛ր՝ կանանց ուռկան:
Նա՛ կանացի մերկ ուսերը

Ըրաւ բարձ, եւ ի՛ր մեջ սերը,
Կրակ ու բոց, հո՛ւր ու կայծակ,
Մշին քացաւ միշտ խոշոր ծակ:
Մահկանացու ո՛վ դու անցորդ,
Ամբակումին տես մնացորդ:
Թո՛ղ օրքներդ մքմրուան՝
Աղօթ կամ շարգի մի՛ր վրան,
Բայց կամաց երգէ ու զնայ՝
Ամբակում չելլայ՝ արքնայ . . . :

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԵԹԷ ՕՂԵՐԸ ԱՂԷԿ ԵՐԹԱՆ
ԱՄԲԱԿՈՒՄ
ՅԱՐՈՒՑԵԱՂԻ Ի ՄԵՌԵԼՈՅ . . .
ԱՆՄԵՌՈՒԿ

ԲԱՐԵԿԱՄԻՍ ԿԻՆԸ

Եւրոպական քերթ մը կը ֆաղեմք
հետեւեալ զուարթ տղերք որոնք յա-
ւակնութիւնը ունին՝ ֆանի մը ցեղե-
րու մէջ տիրող հոգեբանութիւնը բնա-
րոշելու:

— Դերմանացին՝ երբ փողոցին մէջ իր լաւադոշն բարեկամին կնոջը հանդիպի, ըզ-
գացումով մը կը հառաչէ, կիզիչ ափնարկ մը
կը նետէ դէպ ի անոր եւ հանդիպակած մայ-
թը կանցնի:

— Անդլիպցին՝ նմանօրինակ պարադոքս
մէջ, խոր պաշտամունքի երեւոյթ՝ մը կ'առ-
նէ, կնոջ ձեռքը իւր ձեռքին մէջ կը ճմլէ,
առ յաւէտ խորտակուած իր կեանքին վրայ
կը խօսի եւ կը փութայ ամուսնանալու կար-
միր այտերով աղջկան մը հետ որ քաջ գիտ-
նայ բլօս բլսինք պատրաստելու արուեստը:

— Ամերիկացին՝ հիացումով համակուած,
իր բարեկամին ամուսնոյն վրայ կը խօսի,
եւ կը մեկնի ինքզինքէն դո՛ւ՝ իր այս ղզու-
շաւորութեան համար:

— Ֆրանսացին՝ իր աչքերովը աղուոր
բաներ կ'ըսէ եւ երբեմն՝ վրան բաց բաներ կը
մրմնջէ եւ կը հեռանայ բոլորովին զուարթ
սպազայ յողթանակներ երազելով:

ՎԷՄԷՆ



ՇԱԲԹՈՒՍԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՏԱՐ. — Պէրպէրեան նուագահան-
դէսին համար գրեթէ ամէն տուն կազմ լու-
սով ճափճափի պլուզաներ կը կարուին կոր
ի ցոյցս մարդկան: (Կիրակի հոգ պիտի ըլլամ
եթէ հասնելու ըլլամ, մէկիկ մէկիկ կը նը-
կարագրեմ յաջորդիւ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. (Անի-պատմ). — Հոս իբի երկու
բռնեկեռուհի մը, անցեալ իրիկուն չորս
բաւթի յաղթուելուն համար արունը գլուխը
զարկած ըլլալով՝ դրացիները օգնութեան
հասած և տասը հոս սրելիկ փակցուցած են:

ԳԱՏԸ-ԴԻԻՂ. (Եկեղ-եօլ). — Հոս օրուան
խօսակցութիւնն է փոքրիկ չնիկի մը (Մksor)
մէկ օրուան մէջ մէկ քանի փեսայ փոխելուն
առթիւ հիւանդանալը: (Դեռ ինչ օրիորդներ
ունինք որոնք մէկ քանի տարուան մէջ մէկ
հատը չեն կրնար կոր գտնել ... բաղդաւոր
Մksor. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Չենք գիտեր աղքատութեան
թէ անխիղճութեան հետեւանօք, անցեալ
չարթու ծերուկ ընտանիքի հայր և մայր մը
իրենց ձեռքով հասուկ աղջիկնին հոս բերե-
լով տուն մը յանձնած են ի դիւրութիւն ե-
րկատարգին զոր կը սիրէր այդ հուրին:
Երկատարգն օրինաւոր պսակաւ կին մը ու-
նենալով հանդերձ: (Այդ տեսակ հայր և մայր
մը պէտք է նետել մէջն հորին. Ծ. Խ.):

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Կարապետ ԷՖ. Պուրմանան

Ռուբէն էֆ. Սարգսանի դրամ չէք յանձ-
ներ, ինքը անանկ կըսէ կոր եղեր, ալ բա-
ւական չէ՝ մեղ արուած սանդարամէտական
եզիյեքը: Բիչ մ'ալ խիղճով գործեցէք:

Խմբ.

Ռուբէն ԷՖ. Սարգսան

Դրամները ձեր գրպանը տաքցուցած են
գրեխուս համար վշտացեր էք ... «Խըլլո-
տին ցուրտն է մահանա», հիմա ալ աւելի
բարկացէք, մեր դրամը մի տաք, բայց այս
տողերն ալ ձաւատնուդ փակցուցէք:

Խմբ.

ՇԻՆՆ ԶԵՐԵԿՈՑԹ ՄԵԾ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

ՅԱՆՈՒՆ ԵՒ Ի ՅԱՐԳԱՆՍ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Կիրակի 18 Նոյ. 1907, ժամը 2 1/2 ին (Ը. Ե.)

ԲԵՐԱ ԲԹԻ ՇԱՆԻ ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ

ԶՄԵՌՆԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՉ

ՀԱՄԱԿ ՏՈՀՄԻԿ

Հասցնիւր արուեստագետներէ եւ

ամաքեռներէ բաղկացած

ԶԱՅՆԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԻԱԿԱՆ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Ահա գեղեցիկ առիթ մը ամեն անոնց
որոնք կը փափախին ի սէր յաւես ողբացեալ
Ուսուցչապետին՝ Ռ. Յ. Պերպէրեանի եւ հա-
մանուն վարժարանին սասարել իբր երախ-
տագետ սան, ծանօթ կամ բարեկամ:

Յերեկոյթին յաջողութիւնը երախտաւոր-
եալ է արդէն շնորհիւ բանիբուն եւ կարող
Մասնախմբին որ ամիսներէ ի վեր ոգի ի
բոին կախատեալ գործին անբերի կազմու-
թեանը համար:

Յայտագիրը իր նոյն ռեբեռուառէն գուրս-
ունի նաեւ սիրուն անակնկալներ, գորս դի-
մողը պիտի կրնայ վայելել ու գնահատել:

Դիմեցե՛ք ուրեմն Կիրակի ի Բրքի Շան,
անգամ մը եւս ապրեցնելու համար, այն
որ մարմնով մեռած քեւ սակայն անունով
եւ գործունեութեամբ միշտ վառ միշտ կեն-
դանի է հորիզոնին վրայ իբր ջան իբր արեւ
կրթական աշխարհին:

ԽՄԲ.

Արտանաշէր ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասցէսի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Յարկէն վար սահեցաւ Շէրլօք Հօլմս և վերնագաւիթը անցաւ այդ մարդուն նահանջը կտրելու համար:

Բայց մարդը չտեսաւ և քանի մը վայրկեան պէտք եղաւ, թփիկներու խառնակութեան մէջ մթնն ստուեր մը նշմարելու որ չէր յարժէր:

Անգլիացին խորհեցաւ, թէ ինչու այդ մարդը չէր փախէր, քանի որ կրնար:

— Ամէն պարագային, մտածեց, այս Լիւբէնը չէ, Լիւբէն տւելի ճարտար պիտի ըլլար, իր մարդերէն մեկը ըլլալու է:

Երկար վայրկեաններ սահեցան: Շէրլօք չէր երերար, աչքը յառած էր հակառակորդին վրայ որ զինքը կը դիտէր: Բայց ինչու հակառակորդը չէր երերար այլ եւս: Անգլիացին ժամանակ կորսնցնող չէր, ստուգեց թէ ատրճանակը կը գործէր, և ուղղակի թշնամիին վրայ քայեց այն պաղարիւնութիւնով և այն վտանգը արհամարհելու կարողութիւնով որք զինքը այնքան սոսկալի կը հանդիսացնէին:

Չոր աղմուկ մը լսուեցաւ:

Անձանօթը ատրճանակը կը լեցնէր: Շէրլօք յանկարծ թաուաքին մէջ նետուեցաւ, միւսը ժամանակ չունեցաւ դառնալու, Անգլիացին արդէն հիմայ անոր վրան էր: Կռիւ մը տեղի ունեցաւ, որուն միջոցին, Շէրլօք հասկցաւ որ մարդը դաշոյնը հանելու ջանք կընէր: Շօլմս աւելի զայրացած, ուժ մը եկաւ վրան, և գետինը պառկեցուց հակառակորդը, վրան հեծաւ և կոկորդը սեղմեց մէկ ձեռքով խեղդելու աստիճան, միւս ձեռքով լամբարը փնտռեց, կոճակին վրայ կռիւն, լոյսի հոսանք մը իր բանասարկեալին երեսին վրայ ժայթքեց:

— Վիլսօն, պոռաց սարսափած:

— Հէրլօք Շօլմս, կակազեց խեղդուկ և խուլ ձայն մը:

Երկար ատեն իրարու մօտ կեցան, առանց խօսք մը փոխանակելու, երկուքն ալ անարեւակաւ էին: Ինքնաշարժ կառքի մը փողը օդը թնթացուց: Բարակ հով մը տերեւները երերցուց: Յանկարծ Հէրլօք բարկութիւնով մը ցնցեց իր բարեկամը եւ.

— Ի՞նչ, ձեզի ըսի որ ինծի լրտեսէ՞ք...

— Ձեզի լրտեսել ... կակազեց Վիլսօն, բայց չէի գիտէր որ դուք էիք...

— Հապա ի՞նչ կընէիք հող, դուք պիտի պառկէիք քնանայիք նէ:

— Պառկեցայ ... քնացայ, բայց ձեր նամակը...

— Ի՞մ նամակը...

— Այո՛, այն որ մէկը պանդոկ բերաւ ձեր կողմէն...

— Ի՞մ կողմէն, խեղդ էք...

— Կ'երդնում...

— Ո՛ւր է այդ նամակը...

Համբարին լոյսին տակ, կարգաց թուղթի մը կտորին վրայ որ իր բարեկամը իրեն կերկընցներ.

«Վիլսօն, անկողնէդ դուրս ել և գնա Հանրի-Մարթէն ծառուղին, պարտաւորէ որոշ յատակագիծ մը և դարձիւ քնանալու»:

— Հէրլօք Շօլմս»:

— Սենեակները չափելու վրայ էի, ըսաւ Վիլսօն, երբ շուք մը տեսայ պարտէղին մէջ և միակ գաղափար մը ունեցայ...

— Շուքը բռնելու ... գաղափարը, միտակ տակէ վերջը երբ նամակ մը ընդունիք, նայեցէք որ գիրք կեղծուած է:

— Նամակը ձեզմէ չէ՞, յարեց Վիլսօն ճշմարտութիւնը տեսնել սկսելով:

— Աւա՛ղ, ո՛չ:

— Հապա ուրկէ՞:

— Արսէն Լիւբէնէն:

— Բայց ի՞նչ նպատակաւ գրած ըլլալու է:

— Ա՛հ, այդ չեմ գիտեր, և իրաւ որ այդ է զիս ձանձրացնողը, թէ ինչո՞ւ ձեզի ալ անհանգիստ ըրած է սատանան:

Վանդակորմին առջևը եկան, Վիլսոն, որ առաջը կը գտնուէր, դրանը մէկ երկաթը բռնեց ու քաշեց:

— Վա՛յ, ըսաւ, գոցեցի՞ք ...

— Բայց ո՛չ, դուռը կէս բաց ձգած էի:

— Սակա՛յն ...

Հէրլօք Շօլմս, իր կարգին դուռը քաշեց, յետոյ չփոթած նետուեցաւ կղպանքին վրա և հայնոյանք մը արձակեց:

— Կայծա՛կ, գոցուած է, բանալիով գոցուած է:

Բոլոր ուժովը դուռը դըրդեց, յետոյ իր ջանքերուն պարագլուծիւնը հասկնալով, վըհատած. թողուց որ ձեռքերը իննան.

— Ամէն բան հիմակ կը հասկնամ, ըսաւ, ան է, նախատեսեց որ միջոցէն պիտի իջնեմ և ինծի հոս մուկի ծուղակ մը լարեց, այն պարագային համար՝ երբ ես գալի գննութիւններս ընելու այս իրիկուն: Ասկէ զատ, շնորհը ունեցաւ ընկեր մըն ալ զրկելու ինծի: Ամբողջ ասոնք, ինծի օր մը կորսնցնել տալու համար, և այսպէս, անկասկած, ապացուցանելու համար որ, աւելի աղէկ պիտի ընեմ գործերուն չխառնուելով:

Ձեռք մը դպաւ իր ուսին, Վիլսոնի ձեռքը:

— Վե՛ր նայէ ... նայէ ... լոյս մը ...

Արդարեւ պարագլ տանը առաջին յարկին մէկ պատուհանը լուսաւորուած էր:

Երկուքն ալ սրարշաւ խոյացան, իւրաքանչիւրը զատ սանդուխէ մը, և երկուքն ալ մի եւ նոյն ատեն լուսաւորուած սենեակին մուտքին վրայ գտնուեցան: Սենեակին մէջտեղը աշտանակ մը կը վառէր, մօտը սահառ մը կար, և այս սակառէն կ'երեւային շիշի մը վիզը, վառեակի մը զիւթը և հացի մը կէսը:

Շօլմս խնդալէ մարեցաւ:

— Սքանչելի՛, մեզի ընթրիք ալ կը մատուցանեն: Կախարդական վայրի մը մէջ կը գտնուինք: Է՛հ, նայինք, Վիլսոն, յուղարկաւորութեան գացողի մը դէմքը մի շինքի դիմացս: Ասոնց ամէնքը բաւական զուարճալի բաներ են:

— Վստա՛ն էք որ այս զուարճալի ըլլայ, յարեց Վիլսոն:

— Եթէ վստա՛ն եմ, պոռաց Հօլմս, բնականէն ալ աւելի զուարթութեամբ, ատըսել է որ ասկէ աւելի զուարճալի բան տեսած չունէի շիտակը: Աղւոր գօմէտի մըն է: Ի՛նչ վարպետ հեգնող մըն է սա Արսէն Լիւրէնը: Կը զլտորցնէ մարդը, բայց շնորհալիօրէն: Այս խնջոյքին մէջ իմ տեղս աշխարհի ամբողջ ոսկիին հետ չեմ փոխանակէր Վիլսոն, իմ վաղեմի բարեկամս, կը վշտացընէք զիս, երբէ՛ք չպիտի ունենաք այն նկարագիրը՝ որով միշտ դժբաղդութեան հանդուրժէք: Ի՛նչ բանէ կը դանգաւիք, այս ժամուն թերեւս, կրնայիք իմ դաշոյնս ձեռք կուրծքին մէջ ունենալ ... Կամ ես ձերինը իմինիս մէջ, որովհետեւ ահա ատ էր որ կը փնտռէիք, գէշ բարեկամս ...

Հէրլօքի կատակաբանութիւնը և հեղնութիւնը յետին ծայր հասաւ, որպէս զի ողբերէ խեղճ Վիլսոնը, և անոր վառեակի բարձք (պուս) մը և գաւաթ մը գինի կերցուց ու խմցուց, բայց երբ աշտանակին մօտ մարեցաւ, երկուքն ալ գետինը տախտակին վրայ երկնցան քնանալու, իրենց բարձ ունենալով պատերը, այս դժնդակ և ծաղրելի կացութիւններուն ամէն կողմերը իրենց աչքին առջև եկան և իրենց քունը շատ տխուր եղաւ:

Առաւօտուն որոշեցին դուրս ելլալ:

— Երթա՛լ, բայց ի՛նչպէս ըսաւ Վիլսոն,

— Պատուաւոր մարդիկներու պէս, որոնք տունէ մը դուրս կ'ելլան: Հաճեցէք սա երկու ոստիկանները կանչել, ասոնք ծառուղիին վրայ կը պտտին: Անոնց կը յայտնենք մեր ո՛վ ըլլալը, և կը խնդրենք որ բանալին գտնան որ նօտարին քովն է և որուն հասցէն վանդակորմէն կախուած աղդագիրին վրայ նշանակուած է:

— Սակա՛յն ...

— Սակա՛յն ի՛նչ ...

— Սակա՛յն շատ պղտիկութիւն պիտի ըլլայ, ի՛նչ պիտի ըսեն երբ իմանան որ դուք, Հէրլօք Շօլմս և Վիլսոն բանտարկուած էինք: Արսէն Լիւրէնէն ...:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ Ա.ՃԱՌ.Ա.ՏՈՒՆ.

ՀԱՆՐԱՊԵՏԱՐԻ ԿԱՆՈՒՆԱԾ


Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Գ. Պոլիս, Սուրբան Հանաւ, Բօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ
տոկոսնութեամբ և գիններու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վատահոլութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հազուստներու, կանանց թելոյիններու
և տղայոց չիք և գիմացկուն ֆաթիւն-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հազուստի և ուրիշ նմանո-
րէնակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—12



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵՅԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԴՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին
տակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
պոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըը-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Պիւշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 շրշ.	Վեցամսեայ	25 շրշ.
Դաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասանման	» » 12 շր.	» »	6 շր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՏԷ՝

ՊԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի Եւսսէի Աստուծոյն տալան թիւ 52.

Դաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան և
թէ միշտ նոր բաժանորդներու տնօրէն և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանաթաբաթով և կամ բօսթայի փութով 20 հաալ
20 ղրուշի հաշուով:

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ծ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բաղմատեսակ զոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաև անուէններու սկզբնատառով զոհարաղարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ չղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերաբերուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ իսասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական չարժուն օճախ ևլն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանայ տոկունութիւնը, նրբութիւնը և աժա- նութիւնը:

ՍԱԿՍՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթակոն և ամսական վճարմանց համար հաւաքելներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—1

ՎԱՐՁՈՒ Է